



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 դեկտեմբերի 2024 թվականի N<sup>513</sup> -Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետով և 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 96-րդ և 98-րդ հոդվածներով և համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2023 թվականի նոյեմբերի 30-ի «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2024 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» N2530-Ա հրամանի, որոշում եմ.

- Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի (համայնքապետարանի աշխատակազմի ՀՎՀՀ՝ 09426088) տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ 2024 թվականի դեկտեմբերի 12-30-ն ընկած ժամանակահատվածում (13 աշխատանքային օր) կատարել իրավական հսկողություն՝ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության 2022 թվականի հուլիսի 1-ից մինչև 2024 թվականի նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար՝ համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 9-ի N03-Ն հրամանով հաստատված հարցաշարի.
- Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված հսկողություն կատարող աշխատանքային խմբի (այսուհետ՝ աշխատանքային խումբ) անհատական կազմը՝ համաձայն հավելվածի.

3. Ուսումնասիրվող բնագավառների՝ աշխատանքային խմբի անդամների միջև բաշխումը կատարում է աշխատանքային խմբի ղեկավարը՝ համաձայն տվյալ աշխատակցի պաշտոնի անձնագրով սահմանված գործառույթների:

4. Աշխատանքային խմբին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Կապան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ իրավական հսկողության մասով 2024 թվականի աշխատանքային ծրագրի կատարումը և անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

 Recoverable Signature

X



ՏՊՈՒՄ ԵՎ ԵՎԻՍԻՏ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱԿԱՆ ԳՐԱԿԵՆՏՐԱԿ



Signed by: GHUKASYAN ROBERT 3712800290

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝**

**Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2024թ.դեկտեմբերի 5  
ք. Կապան

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ  
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՐԲ  
2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-30-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ  
ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Հ/Հ	Անուն, ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը
1	Սեյրան Ավետիսյան	Սյունիքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ, աշխատանքային խմբի ղեկավար
2	Մարգարիտ Զախարյան	Սյունիքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության գլխավոր մասնագետ
3	Մարինա Գրիգորյան	Սյունիքի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ
4	Մարինե Աբգարյան	Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ
5	Նարինե Աթայան	Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ
6	Մուշեղ Կոստանդյան	Սյունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների վարչության պետ
7	Արմեն Մարտիրոսյան	Սյունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների վարչության գլխավոր մասնագետ
8	Արթուր Արզումանյան	Սյունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների վարչության գլխավոր մասնագետ
9	Նելլի Մովսիսյան	Սյունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների վարչության գլխավոր մասնագետ
10	Ժենյա Նավասարդյան	Սյունիքի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի գլխավոր մասնագետ

11	Աննա Մովսեսյան	Սյունիքի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի գլխավոր մասնագետ
12	Ռոբերտ Կոստանոյան	Սյունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ
13	Աննա Ոսկանյան	Սյունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ
14	Արսեն Գրիգորյան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ
15	Իննա Բալայան	Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ
16	Թամարա Կարապետյան	Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ
17	Արմեն Ավագյան	Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ (համաձայնությամբ):

Սյունիքի մարզպետի աշխատակազմի  
գլխավոր քարտուղար՝



*E. Marutiroujan*

Է.Մարտիրոսյան